ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«10» 07 2020թ.
No Ահ/-2654

«ՆՈՐ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
(հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Կորյունի փ., 5)

Ձեզ եմ տրամադրում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հուլիսի 9-ի ««Նեսթ Կապիտալ» և «Նոր Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 281-Ա որոշման (այսուհետ՝ թիվ 281-Ա որոշում) պատճենը:

Այդ կապակցությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման համար խնդրում եմ Հանձնաժողով ներկայացնել «Նոր Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիրքորոշումն ու փաստարկները թիվ 281-Ա որոշման մեջ նշված հարցի վերաբերյալ:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Կատարող՝ Մերուժան Խաչատրյան, հեռ. 060 830 840 (242)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հուլիսի 2020 թվականի
Թիվ 281-Ա

«ՆԵՍԹ ԿԱՊԻՏԱԼ» ԵՎ «ՆՈՐ ԿԱՊԻՏԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հուլիսի 9-ի դռնբաց նիստում քննարկեց «Նեսթ Կապիտալ» և «Նոր Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ՝ «Նեսթ Կապիտալ» ընկերություն և «Նոր Կապիտալ» ընկերություն) կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) հնարավոր խախտման վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հանձնաժողովը տնտեսվարող սուբյեկտների կողմից հրապարակված ակցիաների, զեղչերի և գովազդների վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունների շրջանակներում պարզել է, որ Ընկերության ֆեյսբուքյան էջում հրապարակված են «բոլոր վարորդները, որոնք օգտվում են այն գազալցակայաններից, բենզալցակայաններից և ավտոտեխսպասարկման կետերից, որտեղ փակցված է «NEST» տարբերանշանը, կարող են իրենց «NEST» քարտերի վրա կուտակված միավորներն օգտագործել ապահովագրական պայմանագիր կնքելիս» բովանդակությամբ գովազդներ (https://www.facebook.com/1881737098774871/videos/1156884847806415),(https://www.facebook.com/1881737098774871/videos/2024324454516134) (այսուհետ՝ Գովազդներ), ինչպես նաև «NEST» բջջային հավելվածի «Ապահովագրություն» բաժնում նշված է, որ քարտապանները կարող են կնքել ԱՊՊԱ պայմանագրեր 6 ապահովագրական ընկերությունների հետ:

Հանձնաժողովի նախագահի՝ 2020 թվականի հունիսի 4-ի թիվ ԳԳ-2265 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-2265 գրություն) «Նեսթ Կապիտալ» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն առ այն, թե արդյոք «NEST» քարտերի վրա կուտակված միավորները քարտապանները կարող են օգտագործել ապահովագրական պայմանագիր կնքելիս՝ առկայության դեպքում ներկայացնելով 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 4-ը ընկած ժամանակահատվածում հիմնավորող փաստաթղթերի (այդ թվում՝ պայմանագրերի կնքման մասին վկայող փաստաթղթերի և այլ տվյալների) պատճենները:

«Նեսթ Կապիտալ» ընկերությունը 2020 թվականի հունիսի 15-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ «Nest Bonus» քարտի ֆեյսբուքյան էջում առկա տեղեկատվությունը տեղադրվել է 2017 և 2018 թվականներին, իսկ «Nest Bonus card» ապրանքանիշը «Նեսթ Կապիտալ» ընկերության կողմից օգտագործվում է 2020 թվականից, իսկ մինչ այդ օգտագործվել է «Նոր Կապիտալ» ընկերության կողմից և այդ պատճառով «Նեսթ Կապիտալ» ընկերությունը Հանձնաժողովից խնդրել է լրացուցիչ տրամադրել 15-օրյա ժամկետ,

որպեսզի կարողանա իմի բերել անհրաժեշտ փաստաթղթերը և լիարժեք ներկայացնել պահանջված տեղեկատվությունը:

Ի պատասխան «Նեսթ Կապիտալ» ընկերության 2020 թվականի հունիսի 15-ի Հանձնաժողով ներկայացրած գրության, Հանձնաժողովի նախագահի՝ 2020 թվականի հունիսի 17-ի թիվ ԳԳ-2440 գրությամբ «Նեսթ Կապիտալ» ընկերությանը պահանջված տեղեկատվությունը ներկայացնելու համար տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև 2020 թվականի հունիսի 22-ը:

«Նեսթ Կապիտալ» ընկերությունը 2020 թվականի հունիսի 22-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ «Նոր Կապիտալ» ընկերությունը հիմնադրվել է 2016 թվականին, «Nest Bonus card» ապրանքային նշանի գրանցումը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունում (այսուհետ՝ Գործակալություն) իրականացվել է 2017 թվականին 20170506 հայտի հիման վրա: «Նոր Կապիտալ» ընկերությունը 2017-2018 թվականներին իրականացրել է ԱՊՊԱ պայմանագրերի կնքում՝ համագործակցելով գրեթե բոլոր ապահովագրական ընկերությունների հետ: Նշված ժամանակաշրջանում կնքվել է մոտ 97 մլն դրամի ԱՊՊԱ պայմանագրեր:

«Նեսթ Կապիտալ» ընկերությունը հայտնել է նաև, որ հիմնադրվել է 2018 թվականի օգոստոսի 13-ին: «Նեսթ Կապիտալ» և «Նոր Կապիտալ» ընկերությունների միջև «Nest Bonus card» ապրանքային նշանի առքուվաճառքի պայմանագիրը կնքվել է 2020 թվականի մարտի 16-ին: «Նեսթ Կապիտալ» ընկերության կողմից ապրանքային նշանի վերագրանցման փաստաթղթային փաթեթը Գործակալություն է ուղարկվել 2020 թվականի հունիսի 18-ին և ակնկալվում է, որ դրական պատասխանը կստացվի մինչև 2020 թվականի հունիսի 30-ը: Ապրանքային նշանի ձեռքբերման գործընթացն սկսվել է ավելի վաղ դեռևս 2019 թվականի սեպտեմբերից, սակայն այս գործընթացում «Նեսթ Կապիտալ» ընկերությունը հանդիպել է մի շարք բարդությունների, քանի որ կազմակերպությունն ապահովագրական լիցենզիա ստանալու համար պետք է դիմի որևէ ապահովագրական ընկերության: «Նեսթ Կապիտալ» ընկերությունը դիմել է «Նաիրի Ինշուրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և վերջինիս միջոցով Կենտրոնական բանկից մերժում ստացել: Ըստ «Նեսթ Կապիտալ» ընկերության Կենտրոնական բանկից բանավոր փոխանցել են, որ հնարավոր է «Նեսթ Կապիտալ» ընկերությունը և «Նոր Կապիտալ» ընկերությունը փոխկապակցված են և հետագայում թյուրիմացություններից խուսափելու համար անհրաժեշտ է, որ «Նոր Կապիտալ» ընկերությունը հրաժարվի Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ապահովագրական լիցենզիայից: «Նեսթ Կապիտալ» ընկերությունը տեղեկացրել է «Նոր Կապիտալ» ընկերության տնօրինությանը, որ ապրանքային նշանի ձեռքբերման և հետագայում բոնուսներով ծառայություններ մատուցելու նպատակով անհրաժեշտ է, որ իրենք հրաժարվեն իրենց լիցենզիայից: Կենտրոնական բանկից ստացված լիցենզիան կասեցնելու համար «Նոր Կապիտալ» ընկերությունը լուծարել է 5 գործընկեր ապահովագրական ընկերությունների հետ կնքված պայմանագրերը: Նշված գործընթացին զուգահեռ «Նեսթ Կապիտալ» ընկերությունը Կենտրոնական բանկին դիմել է 2-րդ անգամ «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության միջոցով: Ծավալուն աշխատանքների կազմակերպման արդյունքում 2020 թվականի փետրվարի 26-ին Ընկերությունը Կենտրոնական բանկի կողմից ստացել է թիվ 12361 ապահովագրական լիցենզիան, որից հետո սկսվել է ապահովագրական ընկերությունների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: «Նաիրի Ինշուրանս» և «Ռեսո» ապահովագրական ընկերությունների հետ արդեն կնքվել են համապատասխան պայմանագրերը, «Սիլ» և «Արմենիա» Ինշուրանսների հետ նախատեսվում է պայմանագիր կնքել 2020 թվականի հուլիսին, «Ռոսգոսստրախի» և «Ինգո Արմենիայի» հետ բանակցություններ են տարվում:

«Նեսթ Կապիտալ» ընկերությունը հայտնել է նաև, որ խնդիրը կայանում է նրանում, որ «Նեսթ Կապիտալ» ընկերությունը մշակում է քաղաքացիների կողմից միավորների դիմաց ԱՊՊԱ կնքելու օնլայն հարթակ և պետք է հստակեցված լինի, թե որ կազմակերպություններն են այս գործընթացի մեջ մտնում, որոնք՝ ոչ: IT-ի թիմն էլ պետք է ունենա հստակ տեխնիկական առաջադրանք, որպեսզի կարողանա լուծել իր առջև դրված խնդիրը: Այս գործընթացների ընթացքում «Նեսթ Կապիտալ» ընկերությունը ձեռնպահ է մնացել Գովազդի ցուցադրումներից և

առհասարակ ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գովազդային մեծ արշավներից՝ հաշվի առնելով առկա խնդիրները:

«Նեսթ Կապիտալ» ընկերությունը նշել է, որ ներկայումս փորձում է ԱՊՊԱ պայմանագրերի կնքման ծառայությունների դիմաց առաջարկել այլ ապահովագրական ծառայություններ, այսպես կոչված ապահովագրական «կամավոր պրոդուկտներ» (Just ԱՊԿԱ, Just CASCO+ և այլն) մինչև վերջնական գործընթացի ավարտը, ինչպես նաև միավորների դիմաց տրվում են գազի կտրոններ: Գործընկեր կազմակերպությունների մոտ իրականացվել է միավորներով հետաքաշումների պիլոտային ծրագիր, որպեսզի քաղաքացիներն ամեն անգամ, միավորներ սպառելու համար չմոտենան գրասենյակ՝ կտրոն վերցնելու համար:

«Նեսթ Կապիտալ» ընկերությունը ԱՊՊԱ պայմանագիր բոնուսային միավորների դիմաց «Nest Bonus card»-ի շահառուների հետ կկնքի, երբ ավարտվեն վերը նշված իրավական-տեխնիկական գործընթացները: «Նեսթ Կապիտալ» ընկերությունը չի հրաժարվում շահառուներին ԱՊՊԱ ծառայություններ մատուցելուց, անկախ այն հանգամանքից, որ նման իրավական պարտավորվածություն նախատեսված չէ ապրանքային նշանի ձեռքբերման պայմանագրով, իսկ «Նոր Կապիտալ» ընկերությունն իր մասով ավարտել է միավորներով ծառայություններ մատուցելու գործընթացը: «Նեսթ Կապիտալ» ընկերությունը մշակել է նաև բոնուսային միավորների կուտակման ծրագիր և «Նոր Կապիտալ» ընկերության կողմից տրամադրված բազան զետեղել է նոր ծրագրում: Ներկայումս «Նեսթ Կապիտալ» ընկերության իրավաբանական թիմը մշակում է նոր օֆերտա, որտեղ հստակ կերպով կարտացոլվի այն ծառայությունների շրջանակը, որտեղ քարտապանները կարող են ծախսել իրենց միավորները: Ներկայումս թյուրըմբռնումներից խուսափելու համար 2020 թվականի հունիսի 18-ի դրությամբ «Նեսթ Կապիտալ» ընկերությունը «Nest Bonus card»-ի ֆեյսբուքյան էջից հեռացրել է նշված տեսագովազդը: «Նեսթ Կապիտալ» ընկերության կողմից ապրանքային նշանի և ապահովագրական լիցենզիայի ձեռքբերման աշխատանքները կազմակերպվել են արդյունավետ կերպով՝ չնայած մարտի 15-ից մինչև այժմ երկրում գործում է արտակարգ դրություն և երկրում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը բազմավեկտոր է և խաթարում է բոլոր գործընթացների կազմակերպումը տարբեր հարթություններում: «Նեսթ Կապիտալ» ընկերությունը գրությանը կից ներկայացրել է թիվ ԳԳ-2265 գրությամբ պահանջված տեղեկատվությունը:

Փաստորեն, «Նեսթ Կապիտալ» ընկերության հայտնած տեղեկատվության համաձայն՝ «Nest Bonus card» ֆեյսբուքյան էջում առկա տեղեկատվությունը տեղադրվել է 2017 և 2018 թվականներին, իսկ «Nest Bonus card» ապրանքանիշը «Նեսթ Կապիտալ» ընկերության կողմից օգտագործվում է 2020 թվականից, իսկ մինչ այդ օգտագործվել է «Նոր Կապիտալ» ընկերության կողմից, ընդ որում ԱՊՊԱ պայմանագրերը ևս կնքվել են «Նոր Կապիտալ» ընկերության կողմից:

«Nest Bonus card» ֆեյսբուքյան էջում հրապարակված է հետևյալ բովանդակությամբ գովազդ. «բոլոր վարորդները, որոնք օգտվում են այն գազալցակայաններից, բենզալցակայաններից և ավտոտեխսպասարկման կետերից, որտեղ փակցված է «NEST» տարբերանշանը, կարող են իրենց «NEST» քարտերի վրա կուտակված միավորներն օգտագործել ապահովագրական պայմանագիր կնքելիս», մինչդեռ «NEST» քարտերի վրա կուտակված միավորներով քարտապանների հետ ԱՊՊԱ պայմանագրեր չեն կնքվում:

Բացի այդ, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «NEST» բջջային հավելվածը, որի արդյունքում պարզվել է, որ «Ապահովագրություն» բաժնում նշված են 6 ապահովագրական ընկերություններ, որոնց հետ քարտապանները կարող են կնքել ԱՊՊԱ պայմանագրեր, իսկ տվյալները լրացնելու դեպքում նշվում է, որ հարցումը շուտով կհաստատվի, սակայն Ընկերության կողմից ԱՊՊԱ պայմանագրեր չի կնքվում:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա

գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով մոլորեցումը կարող է ծագել ապրանքների գովազդմանը կամ տարածմանը նպաստող միջոցառումների իրականացման ընթացքում, մասնավորապես, տեղի ունենալ ապրանքի աշխարհագրական ծագման, ինչպես նաև սույն օրենքի 13 հոդվածի 2-րդ մասում թվարկված առանձնահատկությունների նկատմամբ: Մոլորեցում է համարվում նաև ապրանքների որակն անհիմն չափազանցնելը, որակի, քանակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), կեղծիքը գովազդատուի անձի վերաբերյալ: Հասարակության մոլորեցում է համարվում նաև ապրանքի արտադրության տարեթվի, ամսվա, օրվա կամ պահպանման ժամկետի, տվյալ ապրանքը արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվան (անվանման) կամ հասցեի կամ օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ հայերեն նշումների բացակայությունը կամ օրենքին հակասող նշումների առկայությունը կամ գովազդի մեջ (գովազդման ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ կամ օրենքին հակասող գովազդը:

Տվյալ դեպքում, «Nest Bonus card» ֆեյսբուքյան էջում «բոլոր վարորդները, որոնք օգտվում են այն գազալցակայաններից, բենզալցակայաններից և ավտոտեխսպասարկման կետերից, որտեղ փակցված է «NEST» տարբերանշանը, կարող են իրենց «NEST» քարտերի վրա կուտակված միավորներն օգտագործել ապահովագրական պայմանագիր կնքելիս» բովանդակությամբ գովազդ հրապարակելը, ինչպես նաև «NEST» բջջային հավելվածի «Ապահովագրություն» բաժնում նշելը, որ քարտապանները կարող են կնքել ԱՊՊԱ պայմանագրեր 6 ապահովագրական ընկերությունների հետ, այն դեպքում երբ «NEST» քարտերի վրա կուտակված միավորներով քարտապանների հետ ԱՊՊԱ պայմանագրեր չեն կնքվում, կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու որոշումներ Օրենքի հնարավոր կամ փաստացի խախտումների, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու, ստուգում, ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ «Նեսթ Կապիտալ» և «Նոր Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «թ» կետերը, 34-րդ հոդվածը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը

որոշում է

1. «Նեսթ Կապիտալ» և «Նոր Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից Օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ հարուցել վարչական վարույթ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ